ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՏՀՏ միջոցների կիրառումը որպես կրտսեր դպրոցականների ուսումնառության արդյունավետության բարձրացման միջոց

Հետազոտող ուսուցիչ՝ Մայրանուշ Քամալյան

Դպրոց՝ Մուղնու Մ. Աշճյանի անվան հիմնական դպրոց

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1. ՏՀՏ միջոցների կիրառումը որպես կրտսեր դպրոցականների ուսումնառության արդյունավետության բարձրացման միջոց 6

1.1 Մեդիագրագիտության կարևոր դերը ՏՀՏ գործիքների կիրառության գործում 6

1.2 Դասեր՝ համեմված ՏՀՏ տարբեր միջոցներով 8

Եզրակացություն 14

Օգտագործված գրականության ցանկ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորագույն տեխնոլոգիաների սրընթաց զարգացման այս ժամանակահատվածում, զգալի փոփոխություններից անմասն չի մնում նաև կրթական ոլորտը: Այսօր մեդիակրթության անհրաժեշտությունը հասել է այն աստիճանի, որ դրա ազդեցությամբ փոխվել են նաև կրթության նկատմամբ մոտեցումները:

Մեր թեմայի **արդիականությունը** պայմանավորված է արդի մասնագիտական ոլորտում դասագրքից դուրս ուսումնական տեղեկույթը ՏՀՏ միջոցներով ձեռք բերելու անհրաժեշտությամբ և պահանջով: Այսօր տարրական դպրոցի աշակերտներին ներկայացվող պահանջները մեծ փոփոխությունների են ենթարկվել: Այժմ աշակերտներին ավելի շատ ոգևորում են ոչ թե դասագրքում տրված հանձնարարականները, այլ դրանց հետ կիրառվող ՏՀՏ միջոցներով տրվող տեղեկությունները, որոնց շնորհիվ դեռ կրտսեր դպրոցական տարիքից սովորողները գիտելիքների ձեռքերմանը զուգահեռ ստանում են իրենց կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Դեռ Տարրական դասարաններից սկսած աշկերտները պետք է կարողանան ինքնուրույն գտնել իրենց հանձնարարված տեղեկույթը, մշակել այն և ներկայացնել դասերի ընթացքում, շատ դեպքերում սահիկների կամ տեսանյութերի միջոցով: Այս պահանջը, սակայն, ձևակերպված չէ ուսումնական պլաններում և դասագրքերում: Այստեղ այդպիսի բովանդակությամբ աշխատանքներ գրեթե չկան, եթե կան էլ բավարար մակարդակով չեն իրականացվում: Կրտսեր դպրոցում դասերի կազմակերպումը անկատար է այս առումով: Այս ամենին զուգահեռ անառարկելի է, որ տեղեկատվական ներկայիս ժամանակաշրջանում կրտսեր դպրոցականի դաստիարակության, մտածողության զարգացման, աշխարհընկալման ձևավորման ամենահզոր միջոցներից մեկը մեդիան է: Այս իմաստով մեդիան նույնիսկ կարող է դառնալ կրթության հուսալի դաշնակից:

Մեր հետազոտության **նպատակը՝** մշակել տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում կիրառելուն միտված մեթոդական ցուցումներ:

Մեր հետազոտության **նորույթն** այն է, որ մենք մեր աշխատանքում ուսումնասիրել և կազմել ենք մեր թեմայի հիմնախնդրի վերաբերյալ զանազան հիմնավորումներ՝ տիպական օրինակներով, որոնք ներկայացվում են սովորողների մեդիագրագիտության տեսանկյունից: Նշված օրինակներն առնչվում են տարրական դասարաններում ուսումնական գործընթացում ՏՀՏ միջոցների կիրառման հնարավորություններին:

Մեր աշխատանքի **խնդիրներն** են՝

1. բացահայտել ՏՀՏ միջոցների օգտագործման հիմնական առանձնահատկությունները, որոնք կօգնեն ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի,
2. ուսումնասիրել և առանձնացնել համացանցում առկա պատրաստի ծրագրային արտադրանքը, որը նախատեսված է կրտսեր դրպրոցականների համար,
3. բացահայտել դրանց՝ ծրագրային նյութերի յուրացմանը նպաստող հնարավորությունները,
4. մշակել մեթոդական ցուցումներ և հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Մեր ուսումնասիրության **գիտատեսական նշանակությունը**. մեր ուսումնասիրության արդյունքները և մշակած մեթոդական ցուցումները կիրառելի են տարրական դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների դասերի ընթացքում:

Մեր հետազոտական աշխատանքը գրելիս, մենք օգտվել ենք գիտական գրավոր խոսքին հատուկ մի քանի մեթոդներից, որոնք հնարավորություն են տալիս աշխատանքի ընթացքը ճիշտ կազմակերպելու:

Այդ **մեթոդները** հետևյալն են՝

- մասնագիտական գրականության ուսումնասիրում,

- տարրական դպրոցի ծրագրերի և դասագրքերի ուսումնասիրություն,
- տեղեկատվական միջոցների ուսումնասիրում,
- ուսումնասիրությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն,
- դասալսումների իրականացում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՏՀՏ միջոցների կիրառումը որպես կրտսեր դպրոցականների ուսումնառության արդյունավետության բարձրացման միջոց

1.1 Մեդիագրագիտության կարևոր դերը ՏՀՏ գործիքների կիրառության գործում

Կրտսեր դպրոցական տարիքը գիտելիքների կուտակման արդյունավետ ժամանակահատված է, և այս տարիքի երեխաները պատրաստակամ են գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Սկսած տարրական դպրոցից, ուսումնառության ընթացքին զուգահեռ իրականացվում է երեխայի հոգեկանի զարգացումը, ձևավորվում են ճանաչողական ընդունակություններ, ինչպես նաև մարդկանց և սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի դրսևորում: Այս տարիքի երեխաների մոտ, ժամանակի զարգացումների պահանջով, առաջ է գալիս նաև ևս մեկ կարևոր խնդիր, որն է՝ այլընտրանքային ճանապարհով գիտելիքների ձեռքբերման կարողությունների մշակումը: Մեր թեմայի շրջանակներում մենք անդրադարձել ենք գիտելիքների այլընտրանքային ձեռքբերմանը և դասագրքային գիտելիքների փոխլրացմանը նպաստող, մանկական տեղեկատվական միջոցներին:

Գիտելիքների այլընտրանքային ձեռքբերման գլխավոր աղբյուրը այսօր ամենահաս համացանցն է: Չնայած նրան, որ նորագույն տեխնոլոգիաների զարգացման ռիթմից դուրս են մնում տեղեկատվական մի շարք աղբյուրներ, բայց սա դեռ չի նշանակում, որ տարբերվող ինֆորմացիա գտնելու համար մենք չպետք է դիմենք մեր ավանդական տեղեկատվության միջոցներին: Բնականաբար, այսօր անհրաժեշտ տեղեկությունը ձեռք բերելը համացանցի միջոցով շատ ավելի դյուրին է, քան գրադարան այցելելը, գրքերի մեջ փնտրվող ինֆորմացիան գտնելը կամ

դիմելը ավանդական տեղեկատվամիջոցներին՝ մամուլին, ռադիոյին կամ հեռուստատեսությանը: Սակայն համացանցային տեղեկատվության մեջ մենք շատ հաճախ հանդիպում ենք միօրինակության, այսինքն կրկնվող նյութերի և ինֆորմացիայի: Հենց այս միօրինակությունը կոտրելու համար պետք է դեռևս տարրական դպրոցից սկսած ձևավորել տեղեկատվական այլ աղբյուրներից օգտվելու մշակույթ, որը նախ և առաջ պետք է նպաստի աշակերտի գիտելիների և խոսքի զարգացմանը, ինչպես նաև աշակերտների մտահորիզոնի ընդլայնմանը:

Ինչպես դպրոցական ծրագրում, այնպես էլ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դեպքում տարվող աշխատանքներն իրականացվում են ճանաչողական, կիրառական և ստեղծագործական բնույթի վարժությունների միջոցով: Համացանցում կարելի է գտնել զանազան ուսուցողական խաղեր, վարժանքներ, մրցույթներ, որոնք ծնող-ուսուցիչ փոխհամագործակցության դեպքում կկարողանան երեխային հեռու պահել սխալ և «վտանգավոր» համակարգչային խաղերից՝ ուղղորդելով դեպի նոր, դաստիարակող, բարոյականը սերմանող, ազգային արժեքները պահպանող խաղերով ու ֆիլմերով ժամանցին, փորձելով սակավեցնել համակարգչով զբաղվելու ժամերը՝ փոխարենը այն օգտագործելով ըստ անհրաժեշտության և նպատակի:

Այստեղ հարկ ենք համարում ընդգծել, որ ծնող-ուսուցիչ փոխհամագործակցության երկու կողմերը աշխատանք պետք է իրականացնեն վերահսկողություն սահմանելու տեսանկյունից: Յուրաքանչյուր կողմը իր պատասխանատու աշխատանքը պետք է կատարի, որ երեխան անվտանգ շփում ունենա մեդիա հարթակում, այստեղ անհրաժեշտ է լավ ճանաչել երեխային, նրա հետաքրքրությունները, որպեսզի կարողանանք հեռու պահել նրան մեդիավտանգներից:

Ուսուցչի մեդիակոմպետենցիաները վերաբերում են ուսուցչի համար անհրաժեշտ մեդիայի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին: Մեդիակոմպետենցիաների կարևորումը նպատակուղղված է կարողություններին, որոնք ուսուցիչները պետք է ունենան մեդիակրթության և մեդիատեխնոլոգիաների հաջող օգտագործման և ներդրման համար: «Ապագա մանկավարժները պետք է մեդիագրագետ լինեն, այսինքն՝ կարողանան որոնել, գտնել, մշակել տեղեկատվությունը, ադապտացնել և մեկնաբանել այն՝ այլ հասցեատիրոջ (աշակերտին) փոխանցելու համար»: Այսօրվա ուսուցիչը գիտակցում է ՏՀՏ-ների կիրառության նշանակությունը կրթական գործընթացում, սակայն դժվար է այն հաջողությամբ կիրառել դպրոցում որոշակի պայմանների բացակայության պատճառով: Այնուամենայնիվ, ուսուցիչը պետք է ունենա և՛ մեդիատեխնոլոգիաները կիրառելու կոմպետենցիաներ, և՛ նաև այդ կոմպետենցիաների գործնական կիրառման միջավայր: Դպրոցում անհրաժեշտ է ստեղծել հատուկ պայմաններ, որպեսզի առարկայի ուսուցիչը ցանկություն հայտնի և կարողանա կիրառել համակարգչային տեխնիկան իր մանկավարժական գործունեության ընթացքում:

1.2 Դասեր՝ համեմված ՏՀՏ տարբեր միջոցներով

Փորձելով օգտվել տեխնիկական զարգացման այս հնարավորություններից, մենք որոշեցինք մեր աշխատանքի գործնական հատվածում կիրառել նորագույն տեխնոլոգիաները որպես կրտսեր դպրոցականներին հավելյալ գիտելիքներ հաղորդելու միջոց:

Մի հետաքրքիր նախաձեռնության միտք հղացավ, որը իրականացրեցինք Մուղնու Մեսրոպ արք. Աշճյանի անվան հիմնական դպրոցի 3-րդ դասարանցիների հետ համատեղ: Նախաձեռնությունը կոչեցինք **«Իրականացրո՛ւ երազանքդ»:** Նախաձեռնության շրջանակներում դասարանի աշակերտների հետ միասին

պատրաստեցինք մի գեղեցիկ արկղիկ: Բոլոր աշակերտները թղթերի վրա գրեցին իրենց երազանքները և գցեցին արկղի մեջ: Նախապես աշակերտների հետ պայմանավորվել էինք, որ երազանքները պետք է լինեն դպրոցին և գիտելիքներին առնչվող և վերջում արկղիկը բացելուց հետո պետք է ընտրվեն դասարանի աշակերտների կողմից ամենաշատ հավանության արժանացած երկու երազանքները:

Հաջորդ դասի ընթացքում մենք միասին բացեցինք արկղիկը, հերթով ընթերցեցինք բոլոր աշակերտների գրած երազանքները և քվեարկությամբ ընտրեցինք դրանցից երկուսը:

Առաջինը դասարանի բոլոր աշակերտների կողմից հավանության արժանացավ Հայկի երազանքը: Նա ցանկացել էր մայրենիի դասին ողջ դասարանի հետ դիտել բոլորի կողմից սիրված **«Գտնված երազը»** մուլտֆիլմը: Քանի որ այն անմիջական կապ ուներ մայրենիից նոր հանձնարարվելիք դասի բովանդակության հետ, որոշեցինք, որ առաջինը հենց այս երազանքն էլ պետք է իրականացնենք:

Ողջ դասարանը մեծ ոգևորությամբ սպասում էր Հայկի երազանքի իրականացմանը, որը կարծես երազանք էր դարձել մնացած աշակերտների համար ևս: Ինչպես որ խոստացել էինք հաջորդ դասի ընթացքում մենք ցուցադրեցինք մուլտֆիլմը:

Դիտումից հետո սկսվեց հետաքրքիր քննարկում, որի միջոցով բոլոր աշակերտները հասկացան մուլտֆիլմի կարևոր իմաստը և այն կապվեց մայրենիի **«Մութի և լույսի ծնունդը»** նոր դասընթացի բովանդակության հետ: Ուսուցչուհին ընթերցեց նոր դասը և աշակերտներին հանձնարարեց գտնել մուլտֆիլմի և ստեղծագործության իմաստային նմանությունները:

Աշակերտների համար այս մեթոդով դասի անցկացումը անհամեմատ մեծ դրական արդյունք տվեց, քանի որ նրանք մի քանի անգամ ավելի պատկերավոր և տպավորիչ կերպով հիշեցին այդ դասը և ընկալեցին դրա իմաստը:

Հաջորդ երազանքը, որը միահամուռ հավանության արժանացավ և որոշվեց, որ պետք է իրականանա Էլինայի երազանքն էր, ով ցանկացել էր հանդես գալ ուսուցչի դերում և մեկ դաս վարել ինքնուրույն: Էլինային մի քանի հանձնարարություններ տրվեցին, որպեսզի նա կարողանա լավ պատրաստված ներկայանալ ուսուցչի դերում:

Նա տանը նախապես հրաշալի պատրաստվել էր, նույնիսկ մի հետաքրքիր տեսանյութ էր առանձնացրել իր սիրելի մանկական հաղորդաշարերից մեկի թողարկումներից, որպեսզի ցուցադրեր այն դասընկերների համար: Քանի որ դասանյութը առնչվում էր կենդանիներին, Էլինան ցուցադրության համար ընտրել էր կենդանական աշխարհի մասին պատմող մի թողարկում:

Կրկին շատ հետաքրքիր և բովանդակալի դաս ստացվեց և զուգահեռ իրականացավ Էլինայի երազանքը: Աշակերտները շատ կարևոր փաստեր սովորեցին կենդանիների մասին, ծանոթացան նրանցից մի քանիսի յուրահատկություններին:

Այս ամենը կրկին կապվեց դասի բովանդակության հետ և **«Անտառի բնակիչները»** դասին զուգահեռ աշակերտները ձեռք բերեցին շատ տպավորիչ գիտելիքներ կենդանիների մասին:

Փորձելով ընդգծել նորագույն տեխնոլոգիաների կիրառման օգտակար կողմերը աշակերտների համար, մենք իրականացրեցինք ևս մեկ նախաձեռնություն 4-րդ դասարանի աշակերտների հետ , որը աշակերտներին օգտակարը հաճելիի հետ համատեղելու հմտություն սովորեցնելու նպատակ ուներ: Մենք որոշեցինք աշակերտներին տալ լրատվական թողարկման վարողի դեր և մեկ շաբաթ ժամանակ, որի ընթացքում նրանք պետք է ամեն օր հեռուստացույց դիտելիս կամ համացանցում որոնումներ կատարելիս իրենց մոտ գրի առնեին հետաքրքրաշարժ որևէ նորություն և դրա մասին տեղեկություններ պատրաստեին և ներկայացնեին:

Մեկ շաբաթ անց դասարանում կազմակերպեցինք հետաքրքիր **«Լրատվական թողարկում»**, որի ընթացքում շաբաթվա հետաքրքրաշարժ նորությունները և նյութերը մեզ հաղորդեցին դասարանի աշակերտները:

Այսպիսով աշակերտները սովորեցին, որ կարելի է ուշադրությամբ հետևել կրթական և տեղեկատվական թողարկումներին, քանի որ դրանցից շատ կարևոր գիտելիքներ կարող են քաղել:

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում առավել հեշտ է գտնել օրվա դասի թեմային համապատասխանող լրացուցիչ նյութեր, վարժություններ և մրցույթներ:

Որպես օրինակ կարող ենք ներկայացնել մեր կողմից մշտապես կիրառվող միջոցներից մեկը՝ https://sovorir.am կայքը, որտեղ հնարավոր է գտնել մաթեմատիկական հետաքրքրաշարժ վարժություններ:

Օրինակ՝ <<Թվերի ներկայացումը կարգային գումարելիների գումարի տեսքով>> թեմայի շրջանակներում ամրապնդման փուլում մենք կատարեցինք ինքնաստուգման նմանատիպ վարժություն, որը շատ սիրվեց աշակերտների կողմից: https://sovorir.am/site/lesson/id/1193



<<Հայկական և հռոմեական թվագրության համակարգերը>> թեմայի ուսումնասիրման ընթացքում շատ արդյունավետ էր նմանատիպ վարժության կիրառությունը.https://sovorir.am/site/lesson/id/1330



<<Ճշմարիտ և ոչ ճշմարիտ դատողություններ>> թեմային շրջանակներում կազմակերպեցինք մրցույթ-վիկտորինա, որի ընթացքում աշակերտները կատարեցին նմանատիպ խմբային աշխատանք. https://sovorir.am/site/lesson/id/1345

Նմանատիպ օրինակները բազմաթիվ են, բնական է, որ ամբողջապես ներկայացնելը դժվար է, սակայն մեր ուսումնասիրության ընթացքում որպես հրաշալի աղբյուրներ մենք առանձնացրել ենք մի քանի կայքեր, որոնք հնարավորություն են տալիս օգտվել իրենց հսկայածավալ բազայից։

Այդ կայքերից են՝

- https://hy.khanacademy.org/
- https://lib.armedu.am/
- https://www.imdproc.am/
- https://learningapps.org/ և այլն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՏՀՏ միջոցների կիրառման ազդեցությունը ուսումնասիրելու արդյունքում հանգել ենք մի շարք եզրակացությունների.

1. ՏՀՏ միջոցների՝ մասնավորապես կրտսեր դպրոցականների համար նախատեսված կայքերի ուսումնասիրության արդյունքում, մենք եկանք այն եզրակացության, որ նորագույն տեղեկատվական միջոցների կիրառումը կրտսեր դպրոցականների համար նախատեսված դասանյութերին համապատասխան միայն դրական ազդեցություն է թողնում աշակերտների ընդհանուր զարգացման վրա. կրտսեր դպրոցական տարիքից սկսած երեխաները ծրագրային գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ, ձեռք են բերում նաև իրենց հետագա կյանքի համար սոցիալական մեծ փորձ: Մանկական տեղեկատվական միջոցների և դրանց զուգահեռ մուլտիմեդիա այլ միջոցների կիրառման արդյունքում աշակերտները, բացի ծրագրային գիտելիքներից, ձեռք են բերում մի շարք կարևոր հմտություններ, ինչպիսիք են՝ տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներից օգտվելու հմտությունը, նորագույն տեխնոլոգիաների կիառումը դասագործընթացում, հանձնարարված դասերի բովանդակությանը համապատասխան լրացուցիչ տեղեկությունների ստացում: Այս ամենը միմյանց փոխլրացնելով՝ օգնում են ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանը:

2. Չնայած, որ ուսումնական ծրագրերում տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներից օգտվելու և ՏՀՏ միջոցներ օգտագործելու հետ կապված անկատարություն կա, բայց և այնպես ժամանակակից դասակազմակերպման անբաժանելի մասն է կազմում դրանց

կիրառությունը: Այսօր Հայաստանի Հանրապետության ոչ բոլոր դպրոցներում կան նորագույն տեխնոլոգիաներից օգտվելու և դասերը մուլտիմեդիա հնարավորություններով համեմելու տեխնիկական հնարավորություններ, սակայն մենք մեր ուսումնասիրության ընթացքում եկանք այն եզրակացության, որ ՏՀՏ միջոցների կիրառելիության հնարավորությունները բավականին մեծ են:

3. Մեր կողմից ՏՀՏ միջոցների կիրառումը ապացուցում է, որ, եթե տարրական դասարանում դասերի ժամանակ բավարար չափով և մեթոդապես ճիշտ գործածվեն դրանք, ապա դրանք կհարստացնեն ուսուցման պրոցեսը, ուսուցումը կդարձնել ավելի արդյունավետ, նաև կնպաստումեն սովորողի ստեղծագործական զարգացմանը:
4. ՏՀՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանուկյան Ա. Մ., Մուրադյան Հ. Ս., Մեդիակրթություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների, ասպիրանտների, մեդիամանկավարժների, մեդիահոգեբանների և մեդիասպառողների համար, Երևան, «Զանգակ» հրատ., 2017։

2. Սողոյան Ս., Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը ուսուցիչների պատրաստվածության գործընթացում, «Մանկավարժական միտք», 1-2, 2011, «Զանգակ» հրատ.։